ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

1901 թ. 5 ապր., Նոր-Նախիջեւան։

Խնդեմ տեղ տալ հետեւեալ երկտողիս ազգօգուտ ամսագրիդ էջերում.

«Նոր-Նախիջեւանի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը մտադիր է մօտ ժամանակում առանձին հրատարակութեամբ լոյս ընծայել ազգիս բանաստեղծ հանգուցեալ Ռափայէլ Պատկանեանի բոլոր անտիպ եւ նրա երկասիրութիւնների երկհատոր ժողովածուի մէջ չը մտած աշխատութիւնները, իբրեւ երրորդ հատոր։ Ուստի խնդրում է այն անձանց, որոնց մօտ գտնւում են հանգուցեալի ինքնաձեռագիր նամակները, ոտանաւորները եւ կամ արձակ գրուածները, ըստ կարելոյն շուտով ուղարկել նրանց Գրիգոր Զալխուշեանին հետեւեալ հասցէով՝ *Нахичевань на Дону, Григорію Чалхушьяну*, որոնց փոխարէն անյապաղ կը ստանան նրանց պատճէնները՝ իսկ որոնք չեն կամենալ բնագրերը թողնել Ընկերութեանս, այնպիսիներին դրանք, ընդօրինակուելուց յետոյ, անպատճառ կը վերադարձնուեն»։

Նախագահ՝ Գր. ԶԱԼԽՈՒՇԵԱՆ

Քարտուղար Մ. ՊՕՊՈՎԵԱՆ